

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10**  
**ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի**  
**2023թ. հունիսի 28-ի նիստի**

Խորհրդի 42 անդամներից ներկա էին 36-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Տ.Սուջյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

**ՕՐԱԿԱՐԳ**

1. Հոբելյան:
2. ԵՊՀ Քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչի ընտրության մասին հարց:
3. ԵՊՀ Սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչի ընտրության մասին հարց:
4. ԵՊՀ Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի վարիչի ընտրության մասին հարց:
5. ԵՊՀ Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի վարիչի ընտրության մասին հարց:
6. Ընթացիկ հարցեր:

**1. ԼՍԵՑԻՆ. Հոբելյան:**

Ի.գ.դ., պրոֆեսոր Վոլոդյա Համբարձումի Հովհաննիսյանի ծննդյան 75-ամյա հոբելյանի առթիվ շնորհավորական խոսքով հանդես եկավ իրավագիտության ֆակուլտետի դեկան, ի.գ.դ., պրոֆեսոր Գագիկ Սերգեյի Ղազինյանը: Պրոֆեսոր Ղազինյանն իր խոսքում նշեց, որ անուրանալի է պարոն Հովհաննիսյանի ավանդը կրթության բնագավառում, Հայաստանում միջազգային իրավունքի գիտության զարգացման, երիտասարդ սերնդի դաստիարակման գործում, և որ գնահատելի են հատկապես միջազգային իրավունքի ոլորտի կատարելագործմանն ուղղված պրոֆեսորի գիտական աշխատանքները:

Շնորհավորական ուղերձով հանդես եկավ ԵՊՀ գիտական խորհրդի քարտուղար, բանասիրական գիտությունների թեկնածու, ասիստենտ Մերի Հովհաննիսյանը՝ ԵՊՀ ոսկե մեդալ հանձնելով պրոֆեսորին:

Շնորհավորական ջերմ խոսքերով հանդես եկավ նաև ի.գ.դ., պրոֆեսոր Ն.Այվազյանը:

**2. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչի ընտրության մասին հարց:**

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Իրավագիտության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ, պրոֆ. Ս.Դիլբանդյանը հայտնեց, որ ԵՊՀ Քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչի պաշտոնի տեղակալման մրցույթին մասնակցելու համար դիմել է նույն ամբիոնի գործող վարիչ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վահե Վաղինակի Հովհաննիսյանը:

Մրցութային հանձնաժողովի նախագահը ներկաներին ծանոթացրեց թեկնածուի անձնական գործի տվյալներին, ինչպես նաև ներկայացրեց հավակնորդի թեկնածության վերաբերյալ ԵՊՀ Քաղաքացիական դատավարության ամբիոնի և ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի դրական եզրակացությունները:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** ԵՊՀ Քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչի պաշտոնի համար Վ.Հովհաննիսյանի ընտրության հարցը դնել փակ քվեարկության: Այս կապակցությամբ փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու և դրա արդյունքներն ամփոփելու նպատակով խորհրդի նախագահ Գ.Ղազինյանի առաջարկով ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ՝ դրա անդամներից բաց քվեարկությամբ ընտրվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ ի.գ.դ., պրոֆեսոր Սերգեյ Առաքելյան (նախագահ), ի.գ.թ., դոցենտ Տաթևիկ Դավթյան, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահ Մանե Խաչատրյան:

**ԼՍԵՑԻՆ.** Հաշվիչ հանձնաժողովի նախագահի հաղորդումը քվեարկության արդյունքների մասին: Խորհրդի նիստին ներկա են եղել 42 անդամներից 36-ը, ովքեր բոլորն էլ մասնակցել են քվեարկությանը:

Քվեարկության արդյունքները հետևյալն են՝

Վ.Հովհաննիսյանի օգտին քվեարկել է գիտական խորհրդի 36 անդամ, դեմ՝ 0, անվավեր քվեաթերթիկների թիվը՝ 0:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Հաստատել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկության արդյունքները,

2. Իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վահե Վաղինակի Հովհաննիսյանին համարել ընտրված ԵՊՀ Քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչի պաշտոնում,

3. Միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

**3. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչի ընտրության մասին հարց:**

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Իրավագիտության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ, պրոֆ. Ս.Դիլբանդյանը հայտնեց, որ ԵՊՀ Սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչի պաշտոնի տեղակալման մրցույթին մասնակցելու համար

դիմել է նույն ամբիոնի գործող վարիչ իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Վարդան Նորիկի Այվազյանը:

Մրցութային հանձնաժողովի նախագահը ներկաներին ծանոթացրեց թեկնածուի անձնական գործի տվյալներին, ինչպես նաև ներկայացրեց հավակնորդի թեկնածության վերաբերյալ ԵՊՀ Սահմանադրական իրավունքի ամբիոնի և ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի դրական եզրակացությունները:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** ԵՊՀ Սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչի պաշտոնի համար Վ.Այվազյանի ընտրության հարցը դնել փակ քվեարկության: Այս կապակցությամբ փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու և դրա արդյունքներն ամփոփելու նպատակով խորհրդի նախագահ Գ.Ղազինյանի առաջարկով ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ՝ դրա անդամներից բաց քվեարկությամբ ընտրվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ ի.գ.դ., պրոֆեսոր Սերգեյ Առաքելյան (նախագահ), ի.գ.թ., դոցենտ Տաթևիկ Դավթյան, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահ Մանե Խաչատրյան:

**ԼՍԵՑԻՆ.** Հաշվիչ հանձնաժողովի նախագահի հաղորդումը քվեարկության արդյունքների մասին: Խորհրդի նիստին ներկա են եղել 42 անդամներից 36-ը, ովքեր բոլորն էլ մասնակցել են քվեարկությանը:

Քվեարկության արդյունքները հետևյալն են՝

Վ.Հովհաննիսյանի օգտին քվեարկել է գիտական խորհրդի 34 անդամ, դեմ՝ 2, անվավեր քվեաթերթիկների թիվը՝ 0:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Հաստատել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկության արդյունքները,

2. Իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Վարդան Նորիկի Այվազյանին համարել ընտրված ԵՊՀ Սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչի պաշտոնում,

3. Միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

**4. ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի վարիչի ընտրության մասին հարց:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Իրավագիտության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ, պրոֆ. Ս.Դիլբանդյանը հայտնեց, որ ԵՊՀ Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի վարիչի պաշտոնի տեղակալման մրցույթին մասնակցելու համար դիմել է նույն ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Արտակ Միքայելի Ասատրյանը:

Մրցութային հանձնաժողովի նախագահը ներկաներին ծանոթացրեց թեկնածուի անձնական գործի տվյալներին, ինչպես նաև ներկայացրեց հավակնորդի թեկնածության վերաբերյալ ԵՊՀ Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի և ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի դրական եզրակացությունները:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** ԵՊՀ Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի վարիչի պաշտոնի համար Ա.Ասատրյանի ընտրության հարցը դնել փակ քվեարկության: Այս կապակցությամբ փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու և դրա արդյունքներն ամփոփելու նպատակով խորհրդի նախագահ Գ.Ղազինյանի առաջարկով ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ՝ դրա անդամներից բաց քվեարկությամբ ընտրվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ ի.գ.դ., պրոֆեսոր Սերգեյ Առաքելյան (նախագահ), ի.գ.թ., դոցենտ Տաթևիկ Դավթյան, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահ Մանե Խաչատրյան:

**ԼՍԵՑԻՆ.** Հաշվիչ հանձնաժողովի նախագահի հաղորդումը քվեարկության արդյունքների մասին: Խորհրդի նիստին ներկա են եղել 42 անդամներից 36-ը, ովքեր բոլորն էլ մասնակցել են քվեարկությանը:

Քվեարկության արդյունքները հետևյալն են՝

Վ.Հովհաննիսյանի օգտին քվեարկել է գիտական խորհրդի 36 անդամ, դեմ՝ 0, անվավեր քվեաթերթիկների թիվը՝ 0:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Հաստատել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկության արդյունքները,

2. Իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Արտակ Միքայելի Ասատրյանին համարել ընտրված ԵՊՀ Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի վարիչի պաշտոնում,

3. Միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

**5. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի վարիչի ընտրության մասին հարցը:**

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Իրավագիտության ֆակուլտետի մրցությամբ հանձնաժողովի անդամ ի.գ.թ. Ժ.Ստեփանյանը հայտնեց, որ ԵՊՀ Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի վարիչի պաշտոնի տեղակալման մրցույթին մասնակցելու համար դիմել է նույն ամբիոնի գործող վարիչ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Սամվել Աղվանի Դիլբանդյանը:

Մրցությամբ հանձնաժողովի ներկայացուցիչը ներկաներին ծանոթացրեց թեկնածուի անձնական գործի տվյալներին, ինչպես նաև ներկայացրեց հավակնորդի թեկնածության վերաբերյալ ԵՊՀ Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի և ֆակուլտետի մրցությամբ հանձնաժողովի դրական եզրակացությունները:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** ԵՊՀ Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի վարիչի պաշտոնի համար Ս.Դիլբանդյանը ընտրության հարցը դնել փակ քվեարկության: Այս կապակցությամբ փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու և դրա արդյունքներն ամփոփելու նպատակով խորհրդի նախագահ Գ.Ղազինյանի առաջարկով ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ՝ դրա անդամներից բաց քվեարկությամբ ընտրվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ ի.գ.դ., պրոֆեսոր Սերգեյ Առաքելյան (նախագահ), ի.գ.թ., դոցենտ Տաթևիկ Դավթյան, ԵՊՀ

իրավագիտության ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահ Մանե Խաչատրյան:

**ԼՍԵՑԻՆ.** Հաշվիչ հանձնաժողովի նախագահի հաղորդումը քվեարկության արդյունքների մասին: Խորհրդի նիստին ներկա են եղել 42 անդամներից 36-ը, ովքեր բոլորն էլ մասնակցել են քվեարկությանը:

Քվեարկության արդյունքները հետևյալն են՝

Վ.Հովհաննիսյանի օգտին քվեարկել է գիտական խորհրդի 36 անդամ, դեմ՝ 0, անվավեր քվեաթերթիկների թիվը՝ 0:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

1. Հաստատել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկության արդյունքները,

2. Իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Սամվել Աղվանի Դիլբանդյանին համարել ընտրված ԵՊՀ Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի վարիչի պաշտոնում,

3. Միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

**6. ԼՍԵՑԻՆ. Ընթացիկ հարցեր:**

**6.1. ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Նաիրա Արտաշեսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Ա.Հայկյանցը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

**Ա.** Հաստատել ԵՊՀ Քաղաքացիական իրավունքի ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Նաիրա Արտաշեսյանի՝ «Փոխնակ մայրության իրավական կարգավորման հիմնախնդիրները» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ. 00.03 - «Մասնավոր իրավունք»:

**Բ.** Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆեսոր Վահրամ Ավետիսյանին.

**Գ.** Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

**Խորհրդի նախագահ**

**Գ. Ղազինյան**

**Խորհրդի քարտուղար**

**S.Սուջյան**